This project is funded by the European Union

«Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

«ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ»

Հետազոտության իրականացման մեթոդաբանություն

Մեթոդաբանությունը մշակվել է «Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիայի» կողմից «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում:
Ծրագիրն իրականացնում է «Հայկական բիզնես կոալիցիան» ՝
«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով
գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն»
ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական մ
իության կողմից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ 6
2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ 7
3.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱՆՔ 8
3.1 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖՈՐՄԱԼ ԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ 9
3.2 «CASE STUDY». ՀԱՋՈՂՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....11
3.3 «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԵՐԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ 13
3.4 ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ.....16
3.5 ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ 18
3.6 ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ» ՀԿ-Ի ՄԱՐԶԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 20
3.7 ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ.....22
3.8 ԱՆԿԵՏԱՎՈՐՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 24
3.9 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....25
4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԵՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....26
5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 28
ՀԱՎԵԼՎԱԾ 1: «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ԱՆՑՆՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆԿԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ 29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ձեռնարկատիրական կրթության զարգացման անհրաժեշտությունը հիմնավորված է ՀՀ 2014-2025 թ.թ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի նիստի N 47 արձանագրային որոշման հավելվածի ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 44 որոշման հավելվածի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարության 44-րդ և 45-րդ կետերով: Կարևորելով փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման հարցում ձեռնարկատիրական կրթության առանցքային և կարևոր դերը՝ 2017 թվականին հանրակրթական մի շարք դպրոցներում փորձնական ներդրվեց «ձեռնարկատիրական կրթություն» առարկան, որի նպատակն է խթանել ՀՀ ուսումնական հաստատությունների շրջանավարտների ձեռնարկատիրական գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացումը:

Ձեռնարկատիրական կրթության համալիր ներդրումը նախատեսվում է հանրակրթական համակարգում իրականացնել 4 տարիների ընթացքում (2017թ. սեպտեմբերից 2020թ. սեպտեմբեր)՝ տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում՝ որպես ինտեգրվող բաղադրիչ «Տեխնոլոգիա» առարկայի մեջ, հիմնական դպրոցի 5-7-րդ դասարաններում՝ որպես ինտեգրվող բաղադրիչ «Տեխնոլոգիա» կամ այլ առարկայի մեջ, ավագ դպրոցի 10-րդ դասարանում՝ որպես տեսական, 11-րդ դասարանում՝ որպես գործնական բաղադրիչներ: Այն իրականացվում է Կրթության և գիտության նախարարության և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության համատեղ ջանքերով: Վերջինս ՀՀ հանրակրթության բնագավառում ձեռնարկատիրական և ֆինանսական կրթության ծրագրեր է իրականացնում դեռևս 1992 թվականից (վերապատրաստվել է շուրջ 1500 ուսուցիչ, վերոհիշյալ ծրագրերին մասնակցել է ավելի քան 200000 աշակերտ): Ծրագրերն իրականացվում էին դպրոցների կողմից լրացուցիչ կրթության ձևաչափով՝ այլ ոչ պարտադիր բաղադրիչի շրջանակներում, և միայն 2017 թվականից հետո է, որ մի շարք հանրակրթական դպրոցներում այս առարկան ներդրվեց որպես պարտադիր բաղադրիչ: Փորձնական ծրագիրն իրականացնելու նպատակով «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը մշակել և հեղինակել է ուսուցչի ուղեցույցներ, մեթոդական և օժանդակ նյութեր, վերապատրաստվել են 1247 հիմնական դպրոցների 1356 ուսուցիչ: Հենց այդ ուսուցիչների կողմից էլ 2017-2018 ուստարում ծրագիրը փորձարկվել է այդ դպրոցների 1-ական 2-րդ և 3-րդ դասարաններում, ընդհանուր առմամբ՝ շուրջ 62 900 սովորողների շրջանում:

2018 թվականի սեպտեմբերից հանրապետության բոլոր դպրոցների 2-րդ և 3-րդ դասարաններում ներդրվել է «Տեխնոլոգիա» առարկայում ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրման ծրագիրը: 2017-2018 ուսումնական տարում հանրակրթական ծրագրեր իրականացնող շուրջ 200 ուսումնական հաստատությունում իրականացվել է «Ձեռնարկատիրական կրթություն» առարկայի ներդրման փորձնական ծրագիր (10-րդ և 11-րդ դասարաններում): 2018-2019 ուսումնական տարվանից սկսած՝

«Ձեռնարկատիրական կրթություն» ներդրումը ավագ դպրոցում, որպես երաշխավորված առարկա, իրականացվում է դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակի հաշվին:

Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիայի նախաձեռնությամբ նախատեսվում է **Երևան, Գյումրի և Սևան** քաղաքների համար իրականացնել հետազոտություն այն հանրակրթական դպրոցներում, որտեղ ներդրված է «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացը՝ նպատակ ունենալով ուսումնասիրել այս առարկայի ներդրման արդյունավետությունը և սոցիալական ձեռնարկատիրության ուսուցման հնարավորությունները: Հետազոտությունը կազմված է երկու բաղադրիչներից: **Առաջին բաղադրիչի** հիմնական նպատակն է ուսումնասիրել, թե որքանով արդյունավետ է ընտրված դպրոցներում իրականացվում ձեռնարկատիրական կրթության դասընթացը: **Երկրորդ բաղադրիչով** նախատեսվում է ուսումնասիրել, թե որքանով է ձեռնարկատիրական կրթության դասընթացն անդրադառնում սոցիալական ձեռնարկատիրությանը և ինչպես կարող է սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ դասընթացի նյութը ներդրվել դպրոցական կրթական համակարգում:

Հետազոտական խնդիրների բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը նախատեսվում է ստանալ որակական և քանակական մեթոդների համադրությամբ: Հետազոտության շրջանակներում իրականացվելու է Հայաստանում ձեռնարկատիրական կրթության զարգացմանն ուղղված կրթական ծրագրերի քարտեզագրում և այս շրջանակներում արձանագրված հաջողված դեպքերի ուսումնասիրություն: Որպես հետազոտության իրականացման մեթոդներ կիրառվելու է դասալսումների մեթոդը, իրականացվելու է ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված աշակերտների անկետավորում: Դասընթացի ազդեցության գնահատման նպատակով իրականացվելու է նաև անկետավորում ստուգիչ խմբի համար, որից հետո վիճակագրական թեստերի միջոցով համեմատվելու են ստացված արդյունքները ազդեցության և ստուգիչ խմբերի համար: Նախատեսվում է նաև իրականացնել 11 ֆոկուս խմբային քննարկում «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ, ինչպես նաև խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ, որոնք ներառում են դպրոցի տնօրենները, ձեռնարկատիրական կրթություն առարկան դասավանդող ուսուցիչները, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ մարզային ներկայացուցիչները: Հետազոտության երկրորդ բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է իրականացնել փաստաթղթերի բովանդակային վերլուծություն, որտեղ որպես փաստաթղթեր են ծառայելու գոյություն ունեցող դասագրքերը և մեթոդական ձեռնարկները, որոնք ուղղված են ձեռնարկատիրության ուսուցմանը:

1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ

Հետազոտության բաղադրիչներ՝

Հետազոտությունը կազմված է երկու բաղադրիչներից՝

- Բաղադրիչ 1-ին: «Ձեռնարկատիրական կրթություն դասընթացի ներդրման արդյունավետության գնահատում»
- Բաղադրիչ 2-րդ: «Սոցիալական ձեռնարկատիրության ներդրման հնարավորությունը»

Կիրառվող մեթոդներ

Հետազոտության շրջանակներում կիրառվելու են որակական և քանակական մեթոդներ՝

- Ձեռնարկատիրական կրթության զարգացման շրջանակներում իրականացվող ֆորմալ եվ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի քարտեզագրում
- «Case study». հաջողված դեպքերի ուսումնասիրություն
- «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի դասալսումներ
- Անկետավորում աշակերտների շրջանում ստուգիչ և ազդեցության խմբերի համար
- Խորին հարցազրույցներ դասընթացը վարող ուսուցիչների հետ
- Խորին հարցազրույցներ ընտրված դպրոցների տնօրենների հետ
- Խորին հարցազրույցներ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ մարզային ներկայացուցիչների հետ
- Ֆոկուս խմբեր «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ
- Փաստաթղթերի բովանդակային վերլուծություն

Հետազոտության աշխարհագրություն

Հետազոտությունն իրականացվելու է Հայաստանի երեք քաղաքներում՝

- Ք. Երևան
- Ք. Գյումրի
- Ք. Սևան

Ընտրված դպրոցներ

Հետազոտության իրականացման համար ընտրվել են հետևյալ դպրոցները՝

Քաղաք	Հիմնական դպրոց	Ավագ դպրոց
Ք. Երևան	▪ Երևանի հ.27 հիմնական դպրոց ▪ Երևանի հ.100 հիմնական դպրոց	▪ Երևանի հ. 105 ավագ դպրոց ▪ Երևանի Մ. Գալշոյանի անվան թիվ 148 ավագ դպրոց
Ք. Գյումրի	▪ Գյումրու հ.9 հիմնական դպրոց ▪ Գյումրու հ.30 հիմնական դպրոց	▪ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց ▪ Գյումրու թիվ 26 ավագ դպրոց
Ք. Սևան	▪ Գավառի հ.1 հիմնական դպրոց ▪ Գավառի հ.4 հիմնական դպրոց	▪ Գավառի ավագ դպրոց

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Հետազոտության նպատակներն են՝

1) ուսումնասիրել, թե որքանով արդյունավետ է իրականացվում ձեռնարկատիրական կրթության դասընթացը ընտրված դպրոցներում
2) ուսումնասիրել թե որքանով է ձեռնարկատիրական կրթություն դասընթացն անդրադառնում սոցիալական ձեռնարկատիրությանը և ինչպես է հնարավոր այս թեման ինտեգրել դպրոցական կրթական ծրագրում:

Հետազոտության առջև դրված խնդիրներն են՝

1. Քարտեզագրել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, որոնք ուղղված են կրթական երեք մակարդակներում՝ հանրակրթական, միջին մասնագիտական և բուհական, ձեռնարկատիրական կրթության զարգացմանը:

2. **Պարզել թե ինչպիսին է եղել ձեռնարկատիրական կրթություն առարկայի դասավանդման ազդեցությունը**
   - Պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել «ձեռնարկատիրական կրթություն» առարկայի դասավանդումը աշակերտների շրջանում գիտելիքների և հմտությունների զարգացման բաղադրիչի համատեքստում
   - Պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել «ձեռնարկատիրական կրթություն» առարկայի դասավանդումը աշակերտների շրջանում ձեռնարկատիրության նկատմամբ դիրքորոշումների փոփոխության բաղադրիչի համատեքստում
   - Պարզել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել «ձեռնարկատիրական կրթություն» առարկայի դասավանդումը աշակերտների շրջանում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու բաղադրիչի համատեքստում

3. **Դասընթացի ներդրման արդյունավետության գնահատում**
   - Պարզել, թե որքանով արդյունավետ է իրականացնվել դասընթացի ներդրումը ընտրված դպրոցներում
   - Պարզել, թե որ մեթոդներն են առավել արդյունավետ դասընթացի ուսուցման համար
   - Պարզել, թե ինչպիսի դիրքորոշումներ ունեն դասընթացում ներգրավված աշակերտների ծնողները դասընթացի վերաբերյալ

4. **Սոցիալական ձեռնարկատիրության առարկայի ներդրման հնարավորություն**
   - Պարզել, թե ներդրված «Ձեռնարկատիրական կրթություն» առարկան որքանով է անդրադառնում սոցիալական ձեռնարկատիրությանը,
   - Պարզել, թե ինչպես է հնարավոր առավել արդյունավետ ներդնել սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ առարկա:

3.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԸՆՏՐԱՆՔ

Հաշվի առնելով հետազոտության նպատակները և հետազոտության առջև դրված խնդիրները և ուսումնասիրվող հարցերը՝ առավել նպատակահարմար է իրականացնել հետազոտական մեթոդների տրանգուլյացիա (հետազոտվող օբյեկտի մասին տեղեկատվություն հավաքել մի քանի մեթոդների կիրառումով)՝ ներառելով ինչպես որակական մեթոդներ, այնպես էլ քանակական:

Հետազոտության **Առաջին բաղադրիչի՝ «Ձեռնարկատիրական կրթության դասընթացի արդյունավետության գնահատում» շրջանակներում նախատեսվում է** իրականացնել անկետավորում դասընթացում ներգրավված աշակերտների շրջանում՝ կիրառելով ազդեցության խմբի և ստուգիչ խմբի համեմատության սկզբունքը, ֆոկուս խմբային քննարկումներ դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների շրջանում, ինչպես նաև խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ: Անկետավորման համար կձևավորվի ստուգիչ խումբ (control group) և ազդեցության խմբում քանակական մեթոդով հավաքագրված տվյալները կհամադրվեն և կհամեմատվեն ստուգիչ խմբի արդյունքների հետ: Առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցի մեթոդն ընտրվել է ամբողջացնելու համար ուսումնասիրվող երևույթի մասին ստացվող պատկերը: Տվյալ դեպքում տեղեկատվության ստացման աղբյուր են հանդիսանում ոչ թե «ծառայություն ստացողները», այլ ծառայություն տրամադրողները: Նախատեսվում է խորին հարցազրույցներ իրականացնել ձեռնարկատիրական կրթություն առարկան դասավանդող ուսուցիչների, դպրոցի տնօրենների և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ-ի մարզային ներկայացուցչությունների հետ: Նախատեսվում է իրականացնել նաև հանրապետությունում վերջին հինգ տարիների ընթացքում ներդրված կրթական այն ծրագրերի քարտեզագրում, որոնք ուղղված են ձեռնարկատիրական կրթության զարգացմանը երեք կրթական մակարդակներում՝ հանրակրթություն, միջին մասնագիտական կրթություն և բարձրագույն կրթություն: Դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում կնույնականացվեն և առավել խորքային կուսումնասիրվեն աշակերտների կողմից որպես գործնական աշխատանք իրականացված հաջողված բիզնես պրոյեկտները: Ընդհանուր առմամբ նախատեսվում է իրականացնել 3-4 հաջողված դեպքերի ուսումնասիրություն:

Հետազոտության **Երկրորդ բաղադրիչի՝ «Սոցիալական ձեռնարկատիրության ներդրման հնարավորությունը» շրջանակներում նախատեսվում է իրականացնել որակական կոնտենտ վերլուծություն,** որի շրջանակներում վերլուծության են ենթակա «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի համար նախատեսված դասագրքերը, այլ առարկաների դասագրքերում ինտեգրված հատվածները և դասընթացի վերաբերյալ մեթոդական ձեռնարկները: Այս բաղադրիչի ներքո ենթադրվող մի շարք հարցերի պատասխանները ինտեգրված են առաջին բաղադրիչի շրջանակներում կիրառվելիք մեթոդների մեջ:

3.1 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖՈՐՄԱԼ ԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Վերջին մի քանի տարիների ընթացքում նոր թափ է ստանում դպրոցներում, նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում ձեռնարկատիրական կրթության զարգացման ուղղությամբ տարվող ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացումը: Այս ծրագրերի դրական փորձը կարող է հարուստ և օգտակար տեղեկատվության աղբյուր լինել «սոցիալական ձեռնարկատիրության» առարկայի առավել արդյունավետ ներդրման ուղիների կանխորոշման համար: Այնուամենայնիվ, իրականացվող ծրագրերի վերաբերյալ մեկ աղբյուրից համալիր տեղեկատվություն գտնելը դժվար է, ուստի դժվար է պատկերացում կազմել, թե ինչպիսի ծածկույթով և ինտենսիվությամբ են իրականացվում այս ծրագրերը և ինչպիսի հաջողություններ են գրանցել: Այս իսկ պատճառով անհրաժեշտ ենք համարում իրականացնել ձեռնարկատիրական կրթության զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերի քարտեզագրում, ներառելով ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, որոնք իրականացվում են պետական կառույցների, տեղական հասարակական կազմակերպությունների և միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից:

Ընդհանուր առմամբ քարտեզագրումն իրականացվելու է հետևյալ չափորոշիչների կիրառությամբ՝

- Կրթական ծրագրեր, որոնց իրականացումը նպատակ է հետապնդել Հայաստանում զարգացնել ձեռնարկատիրական կրթությունը, ինչպես նաև սոցիալական ձեռնարկատիրությունը,
- Կրթական ծրագրերը կարող են լինել ֆորմալ, ոչ ֆորմալ և/կամ ինֆորմալ,
- Կրթական ծրագրերը իրականացվել են Հայաստանում վերջին հինգ տարիների ընթացքում,
- Կրթական ծրագրերը կարող են իրականացված լինել պետական, ոչ պետական կառույցների, հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և/կամ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից,
- Կրթական ծրագրեր, որոնք իրականացվում են պետական և մասնավոր հանրակրթական դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ըստ վերոնշյալ չափորոշիչների իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվելու է տեղեկատվության հարցման և պաշտոնական նամակագրությունների միջոցով: Առաջին փուլով տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումներ կուղարկվեն պետական մարմիններին՝ մասնավորապես Կրթության և գիտության նախարարությանը, ՀՀ-ում գործող պետական և մասնավոր բուհերին, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններին և միջազգային դոնոր կազմակերպություններին: Առաջին փուլով կնույնականացվեն բոլոր այն ծրագրերը, որոնք համապատասխանում են քարտեզագրման չափորոշիչներին: Կկազմվի իրականացվող ծրագրերի նախնական ցանկը, որի միջոցով հնարավոր կլինի որոշակի պատկերացում կազմել հետագայում պահանջվող աշխատանքի ծավալի և ռեսուրսների վերաբերյալ: Երկրորդ փուլով տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումներ կուղարկվեն միայն այն կառույցներ, որոնք իրականացնում են ձեռնարկատիրական

կրթության զարգացման ուղղությամբ կոնկրետ ծրագրեր: Այս հարցումների միջոցով հետազոտությունը կփորձի բացահայտել ծրագրերի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, որը ներառում է ծրագրի բովանդակությունը, կառուցվածքը, աշխարհագրությունը, շահառուները և այլն: Անհրաժեշտության դեպքում կկազմակերպվեն հանդիպումներ և թեմատիկ քննարկումներ ծրագրերը իրականացնող կողմերի հետ: Վերջնական հաշվետվությունում նույնականացված յուրաքանչյուր ծրագրի համար կներկայացվի տեղեկատվություն ըստ Աղյուսակ 1-ում բերված ուղեցույցային ոլորտների:

Ներկայացվող կատեգորիա	Հիմնական հարցեր
Ծրագրի անվանումը	
Իրականացնող կողմ/կողմեր	Ո՞ր կազմակերպության/կազմակերպությունների կողմից է իրականացվում ծրագիրը:
Ֆինանսավորող կողմ/կողմեր	Ո՞ր կազմակերպության/կազմակերպությունների կողմից է ֆինանսավորվում ծրագիրը:
Ծրագրի նպատակը	Որո՞նք են ծրագրի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակները և թիրախները:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը	Ինչպիսի՞ կառուցվածք ունի ծրագիրը: Որո՞նք են ծրագրի բաղադրիչները, ինչպիսի՞ գործողություններ են նախատեսվում իրականացվել:
Ծրագրի գործիքները և մեթոդները	Ինչպիսի՞ գործիքներ և մեթոդներ են կիրառվում ծրագրում:
Ծրագրի աշխարհագրությունը	Ո՞ր մարզերում և ո՞ր կրթական հաստատություններում է իրականացվում ծրագիրը:
Ծրագրի շահառուները	Ովքե՞ր են ծրագրի վերջնական շահառուները: Տվյալ պահի դրությամբ որքա՞ն շահառու է օգտվում ծրագրից:
Ծրագրի տևողությունը	Ե՞րբ է մեկնարկել ծրագիրը և ի՞նչ տևողություն ունի: Ինչպիսին է լինելու ծրագրի շարունակությունը:
Ծրագրի բյուջեն	Որքա՞ն է կազմում ծրագրի բյուջեն:
Ծրագրի արդյունքները	Որո՞նք են ծրագրի արդեն իսկ ստացված արդյունքները: Որքանո՞վ են այդ արդյունքները հաջողված:
Հղումներ	Ծրագրի պաշտոնական ինտերնետային կայքի հղումը կամ այլ համապատասխան փաստաթղթերի հղումներ

Աղյուսակ 1: Ձեռնարկատիրական կրթության զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվություն

3.2 «CASE STUDY». ՀԱՋՈՂՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկատիրական կրթության ներդրումը ենթադրում է ոչ միայն տեսական գիտելիքների փոխանցում սովորողներին, այլ գործնական աշխատանքների իրականացում, որի շրջանակներում աշակերտները նախագծում և իրականացնում են բիզնես պրոյեկտներ և գաղափարներ: Այսպիսի գործնական աշխատանքների հաջողված դեպքերի ուսումնասիրությունը հնարավորություն կտա առավել լավ հասկանալ, թե որ գործոններով պայմանավորված են այս դեպքերը եղել հաջողված, որքանով են կիրառված մեթոդները և գործիքները նպաստել առաջընթացին: Այսպիսի հաջողված դեպքերի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ծանոթանալ արդեն իսկ մշակված մոդելներին և հասկանալ, թե որքանով կարող են այս մոդելները կրկնօրինակվել և կիրառվել «սոցիալական ձեռնարկատիրություն» առարկայի ներդրման համար:

Դեպքերի նույնականացում: Ուսումնասիրության ենթակա դեպքերի նույնականացումը իրականացվելու է դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում, երբ ուսումնասիրության ենթակա օբյեկտի վերաբերյալ առավել շատ տեղեկատվություն հասանելի կլինի: Մյուս կողմից, հաջողված դեպքերի բացահայտմանը կարող է նպաստել նաև իրականացվող կրթական ծրագրերի քարտեզագրումը: Դեպքերի ընտրությունը կկատարվի այնպես, որ ներառված լինեն ոչ միայն ֆորմալ կրթական ծրագրերի շրջանակներում արձանագրված հաջողված ծրագրեր, այլև ոչ ֆորմալ: Եթե դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում բացահայտվեն նաև միջազգային դոնոր կազմակերպություններից կողմից իրականացված ծրագրերի շրջանակներում արձանագրված հաջողված դեպքեր, ապա վերջիններս նույնպես կներառվեն ցանկում: Նախնական գնահատմամբ ընդհանուր առմամբ նախատեսվում է իրականացնել 3-4 հաջողված դեպքերի ուսումնասիրություն: Դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում այս քանակները կարող են փոփոխվել կախված նրանից, թե արդյոք կբացահայտվեն նոր դեպքեր, որոնք կարող են օգտակար և հարուստ տեղեկատվության աղբյուր լինեն հետազոտության նպատակներին հասնելու տեսանկյունից:

Դեպքերի ուսումնասիրության մեթոդներ: Նույնականացված դեպքերի ուսումնասիրության համար կկիրառվեն հետևյալ մեթոդները՝

- **Թեմատիկ հարցազրույցներ** ծրագրում ներգրավված կողմերի հետ, այդ թվում ծրագիրն իրականացնող կողմ (դպրոցի տնօրեն, դոնոր կազմակերպություն, հասարակական կազմակերպություն և այլն), ծրագրի համակարգող (ծրագիրը համակարգող ուսուցիչը), ծրագրի մասնակիցներ (աշակերտներ): Թեմատիկ հարցազրույցները իրականացվեն չձևայնացված կամ ազատ հարցազրույցի ձևով[1]:
- **Դիտարկման մեթոդ:** Դիտարկման են ենթակա գործնական աշխատանքների իրականացման համար նախապայման հանդիսացող նյութերը և գործիքները, ֆիզիկական միջավայրը, գործնական աշխատանքի իրականցման գործընթացը (պատրաստում, արտադրություն և այլն), իրացման միջոցները (ցուցադրություններ, վաճառք և այլն), վերջնական արդյունքը (արտադրանք,

[1] Հարցազրույցի այս տեսակը չունի նախապես մշակված պլան կամ ձևակերպված հարցեր. այն ունի միայն ընդհանուր թեմատիկ ուղղվածություն: Հարցազրուցավարին տրվում է զրույցը վարելու լիակատար ազատություն և հարցերը ձևակերպում է ելնելով ուսումնասիրվող առարկայի վերաբերյալ իրեն արդեն իսկ հայտնի տեղեկատվությունից, իրավիճակից և հետազոտության նպատակներից բխող պահանջվող տեղեկատվությունից:

ծառայություն): Կիրառվելու է չձևայնացված կամ ազատ դիտարկման մեթոդը[2], ինչը նշանակում է, որ դիտարկման ենթակա օբյեկտները և միավորները որոշվելու են դաշտային աշխատանքների ընթացքում:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր դեպք առավել խորքային ուսումնասիրվելու է ըստ հետևյալ կարևոր կատեգորիաների՝

- **Գործընթացի նկարագրություն:** Նկարագրվում է ծրագրի իրականացման գործընթացը ըստ հետևյալ փուլերի՝
  - Ծրագրի գաղափարի ծագում
  - Ծրագրի պլանավորում և բիզնես պլանի կազմում
  - Ծրագրի իրականացում
  - Ծրագրի մոնիտորինգ և գնահատում
  - Ծրագրի շարունակակություն, ապագայի տեսլական կամ ծրագրի փակում

- **Արդյունքի նկարագրություն:** Նկարագրվում է ծրագրի արդյունքները ըստ հետևյալ ոլորտների
  - Ո՞րն է եղել բիզնեսի կոնկրետ արդյունքները (արտադրանք, ծառայություն և այլն):
  - Ինչպիսի՞ ֆինանսական և/կամ ոչ ֆինանսական հաջողություն է ունեցել ծրագիրը:
  - Ինչպե՞ս է օգտագործվել ծրագրի արդյունքում ստացված ֆինանսական ռեսուրսները

- **Կիրառված մեթոդներ:** Նկարագրվում է գործնական աշխատանքի իրականացման ընթացքում կիրառված մեթոդները:

- **Ներգրավված կողմեր և դերային բաշխում:** Ովքե՞ր են եղել գործնական աշխատանքի իրականացման ընթացքում ներգրավված կողմերը և ինչպիսի՞ պարտականություններ են ունեցել:

[2] Չձևայնացված կամ ազատ դիտարկման մեթոդի դեպքում ձևայնացված ընթացակարգեր չեն կիրառվում: Դիտարկողը դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում կատարում է առավել նշանակալի իրավիճակների և դեպքերի ընտրություն, որից հետո իրականացնում է դիտարկումը:

3.3 «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԵՐԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

«Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի շրջանակներում իրականացվող դասաժամերի լսումները հնարավորություն կտան նկարագրել ձեռնարկատիրության վերաբերյալ գիտելիքների, կարողությունների և հմտությունների փաստացի փոխանցման գործընթացը՝ այդպիսով հնարավորություն տալով զատորոշել բոլոր այն մեթոդները և գործիքները, որոնք առավել արդյունավետ են և աշխատող: Ստացված տեղեկատվությունը կօգնի ոչ միայն գնահատել իրականացվող դասերի արդյունավետությունը, այլև հետագայում աջակցող նյութ կլինի սոցիալական ձեռնարկատիրություն առարկայի ներդրման ժամանակ:

Դասալսումների ընտրանքը: Դասալսումներն իրականացվելու են հետազոտության ընտրանքում ներառված բոլոր 11 դպրոցներում: Կիրառվելու է տիպային ընտրանքի մեթոդը: Սա ենթադրում է, որ յուրաքանչյուր դպրոցում դասալսման են ենթակա 2-րդ, 3-րդ, 10-րդ և 11-րդ դասարանների դասաժամերի առնվազն երկու ժամեր՝ որոնցից մեկը լինելու է տեսական դաս, մյուսը՝ գործնական: Քանի որ 10-րդ դարսարանում ըստ դասընթացի պլանի նախատեսվում է միայն տեսական մաս, իսկ 11-րդ դասարանում՝ գործնական, 10-րդ և 11-րդ դասարանների դեպքում տեսական և գործնական դասերը բաշխված կլինեն հետևյալ կերպ՝ 2 տեսական դաս 10-րդ դասարանում, 2 գործնական դաս՝ 11-րդ դասարանում: Այսպիսով, ընդհանուր առմամբ դասալսումների նվազագույն թիվը սահմանվում է 44-ը:

Դպրոց	2-րդ դասարան	3-րդ դասարան	10-րդ դասարան	11-րդ դասարան
Երևանի թիվ	1 տեսական 1 գործնական	1 տեսական 1 գործնական	-	-
Երևանի թիվ	1 տեսական 1 գործնական	1 տեսական 1 գործնական	-	-
	-	-	2 տեսական	2 գործնական
	-	-	2 տեսական	2 գործնական
Գյումրիի թիվ	1 տեսական 1 գործնական	1 տեսական 1 գործնական	-	-
Գյումրիի թիվ	1 տեսական 1 գործնական	1 տեսական 1 գործնական	-	-
	-	-	2 տեսական	2 գործնական
	-	-	2 տեսական	2 գործնական
Սևան	1 տեսական 1 գործնական	1 տեսական 1 գործնական	-	-
Սևան	1 տեսական 1 գործնական	1 տեսական 1 գործնական	-	-
	-	-	2 տեսական	2 գործնական
Ընդամենը	12	12	10	10

Աղյուսակ 2: Դասալսումների ընտրանքը

Դասալսման ենթակա կոնկրետ ժամերը կորոշվեն դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում՝ նախապես համաձայնեցնելով դպրոցի տնօրինության և դասը վարող ուսուցչի հետ: Դժվարություն կարող է ներկայացնել միայն 2-րդ և 3-րդ դասարանների դեպքում իրականացվող դասալսումները, քանի այս դեպքում

դասընթացը ներդրված է «Տեխնոլոգիա» առարկայի մեջ և հնարավոր է դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում այս թեմաներով դասաժամերը չհամընկնեն: Այս խնդիրը հաղթահարելու համար անհրաժեշտ է այս տարիքային խմբի դասալսումները պլանավորել դաշտային աշխատանքների ամենասկզբում, որպեսզի հնարավոր լինի ապահովել գոնե հնարավոր նվազագույն թվով դասալսումներ այս դասարաններում:

Դասալսումների ընթացք: Դասալսումներն իրականացվելու են դիտարկման քարտի կիրառությամբ: Դիտարկման քարտը լրացվելու է դասալսողի կողմից ազատ բովանդակությամբ, ինչը նշանակում է, որ դասալսող մասնագետն ըստ առաջարկվող դիտարկման բաղադրիչների և հարցերի նկարագրելու է դասի ընթացքը՝ առանց ձևայնացված հարցերի: Կիրառվելու է մասնագետի կողմից դասաժամի ամբողջական դասալսման տարբերակը: Նախքան դասաժամի սկզիբը կամ դասաժամի ավարտից հետո դասալսողը կարող է 10 րոպեանոց հանդիպում ունենալ դասը վարող ուսուցչի հետ՝ ուսումնասիրելու դասի համար ուսուցչի նախապատրաստած նյութերը (դասապլան, մեթոդական նյութեր, աշակերտների կողմից կատարված տարբեր աշխատանքների նմուշներ և այլն) և քննարկի դասի վերաբերյալ ուսուցչի դիտարկումները: Դասալսումը պետք է իրականացվի միայն մեկ մասնագետի կողմից: Անհրաժեշտ է թույլ չտալ դասալսման ընթացքում բացի դասալսողից այլ «հեղինակավոր» կողմնակի անձանց ներկայությունը (ինչպես օրինակ տնօրեն, ուսմասվար, այլ ուսուցիչներ և այլոք), քանի որ դա կարող է կաշկանդող կամ սթափեցնող ազդեցություն ունենալ ուսուսցչի և աշակերտների վրա և արդյունքում՝ աղավաղել ստացվելիք տեղեկատվությունը:

Դիտարկման բաղադրիչ	Բովանդակություն
Դասի նպատակների ձևակերպում	▪ Որո՞նք են դասի սահմանված նպատակները ▪ Համապատասխանում էին արդյո՞ք սահմանված նպատակները ուսումնական գործողություններին
Դասաժամի կառուցվածքը	▪ Ինչպիսի՞ կառուցվածք ուներ դասաժամը
Կիրառվող մեթոդներ, գործողություններ	▪ Ինչպիսի՞ մեթոդներ էին կիրառվում ▪ Կիրառվում էին արդյո՞ք ինտերակտիվ/համագործակցային մեթոդներ ▪ Ցուցադրվո՞ւմ էին նկարներ, քարտեր, առարկաներ, պատկերներ ▪ Կիրառում էին արդյոք աշխուժացնող խաղեր, վարժություններ ▪ Կիրառվում էր արդյոք միայն դասագիրք թե դասագրքից բացի նաև տպագիր և էլեկտրոնային այլ աղբյուրներ ▪ Զույգային, խմբային աշխատանքների կատարում ▪ Այլ մեթոդներ

Ո՞ր մեթոդներն էին առավել արդյունավետ	▪ Կիրառված մեթոդներից որոնք էին առավել արդյունավետ ըստ հետևյալ չափորոշիչների
	  ▪ Աշակերտների համար հեշտ հասկանալի
	  ▪ Գիտելիքների, հմտությունների փոխանցման արդյունավետություն
	  ▪ Աշակերտների ընդգրված լինելու մոտիվացիայի բարձրացում
	  ▪ Աշակերտների կողմից սեփական մտքերի, դատողությունների արտահայտում

Աշակերտների ներգրավվածությունը	▪ Ինչպիսի՞ն էր ընդհանուր առմամբ աշակերտների ներգրավվածությունը ▪ Կիրառված որ մեթոդների, գործողությունների ընթացքում էին աշակերտներն առավել շատ ներգրավված
Ո՞ր մեթոդներով ներկայացված թեմաներն էին առավել հետաքրքիր աշակերտների համար	▪ Որ թեմաները և որ մեթոդներն էին առավել մեծ հետաքրքրություն առաջացնում աշակերտների շրջանում

Աղյուսակ 3: Դասալսումների քարտ

3.4 ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հետազոտության շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև ֆոկուս խմբային քննարկումներ ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ: Այս մեթոդն արդյունավետ է այն պատճառով, որ խմբային քննարկման միջոցով ստեղծվում է այնպիսի յուրահատուկ սոցիալ-հոգեբանական դաշտ, որը խթանում է խմբում խմբային դինամիկայի առաջացումը և դրա արդյունքում ծավալված բանավեճն իր հերթին հնարավորություն է տալիս բացահայտել առավել խորքային տեղեկատվություն ուսումնասիրվող հարցերի վերաբերյալ:

Ֆոկուս խմբերի ընտրանքի ծավալը: Նախատեսվում է իրականացնել 11 խմբային քննարկում ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված աշակերտների ծնողների հետ՝ համապատասխանաբար 1-ական քննարկում յուրաքանչյուր ընտրված դպրոցում: Սահմանված այս քանակները պայմանական են և կարող են փոփոխվել դաշտային աշխատանքների ընթացքում՝ ելնելով տվյալների տեսական հագեցվածության[3] հասնելու սկզբունքից: Եթե դաշտային աշխատանքների ընթացքում պարզ դառնա, որ ուսումնասիրվող հարցերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը դեռևս բացահայտված չէ կկազմակերպվեն լրացուցիչ քննարկումներ:

Ֆոկուս խմբերի մասնակիցների ընտրություն: Յուրաքանչյուր ֆոկուս խումբ բաղկացած կլինի նույն տարիքային խումբ ներկայացնող աշակերտների ծնողներից, այսինքն մի ֆոկուս խմբի դեպքում ներգրավված կլինեն 2-3-րդ դասարաններում սովորող աշակերտների ծնողներ, մյուս դեպքում՝ 10-11-րդ դասարանների: Մեկ ֆոկուս խմբի մասնակիցների թիվը կարող է լինել 6-12 մասնակից: Ֆոկուս խմբի մասնակիցների օպտիմալ թիվ է համարվում 8 մասնակիցը: Ֆոկուս խմբերում կներառվեն տարբեր զբաղվածություն ունեցող ծնողներ՝ աշխատող, տնտեսապես ոչ ակտիվ, գործազուրկ: Ֆոկուս խմբային քննարկումները կանցկացվեն նախապես մշակված ուղեցույցի հիման վրա, որը ներկայացված է ստորև՝

Ձեռնարկատիրական կրթություն դասընթացքում ներգրավված աշակերտների ծնողների հետ ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց

Ներածություն և ծանոթացում

- Մասնակիցներին ներկայացնում ենք քննարկման նպատակը, սահմանում ենք քննարկման հիմնական կանոնները
- Առաջարկում ենք մասնակիցներին ներկայանալ՝ ներկայացնելով իրենց մասին կարճ տեղեկատվություն:

Վերաբերմունք «ձեռնարկատիրական կրթություն» առարկայի նկատմամբ

- Ինչպիսի՞ն էր Ձեր վերաբերմունքը, երբ իմացաք, որ դպրոցում Ձեր երեխաներն անցնելու են «Ձեռնարկատիրական կրթություն» առարկան:
- Արդյո՞ք ունեիք մտավախություններ այս առարկայի դասավանդման հետ կապված:

[3] Տեսական հագեցվածությունը ենթադրում է, որ դաշտային տվյալների հիման վրա ձևավորած կատեգորիան (գաղափարը, դատողությունը) հարցումներից ստացված տվյալների ստացմանը զուգահեռ այլևս փոփոխության չի ենթարկվում

- Ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքն այժմ:
- Ձեր վերաբերմունքի մեջ նկատե՞լ եք փոփոխություններ, եթե այո, ապա ո՞ր ուղղությամբ և ո՞րն է եղել այդ փոփոխության պատճառը:

Աշակերտների արձագանքները

- Ինչպիսի՞ արձագանք եք ստանում երեխաներից այս առարկայի հետ կապված: Հիմնականում նրանց վերաբերմունքն այս առարկայի նկատմամբ դրակա՞ն է, թե՞ բացասական:
- Հատկապես ինչի՞ մասին են պատմում Ձեզ այս դասից:
- Այս առարկայի հետ կապված ի՞նչն են առավել շատ սիրում, և ինչը՝ ոչ:
- Ո՞ր թեմաներն են առավել դժվար յուրացնում: Ըստ Ձեզ դասավանդման որ մեթոդներով ստացած գիտելիքներն են առավել լավ յուրացնում:

Առարկայի ազդեցությունը աշակերտների վրա. դիրքորոշումների փոփոխություն

- «Ձեռնարկատիրական կրթություն» առարկայի ներդրումից հետո նկատե՞լ եք Ձեր երեխաների մոտ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հակվածության աճ:
- Փոխվե՞լ են արդյոք նրանց գիտելիքները, հմտությունները այս ոլորտում: Կբերեք կոնկրետ օրինակներ:
- Իսկ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նկատմամբ վերաբերմունքը փոխվե՞լ է:
- Փոխվե՞լ է արդյոք նրանց վերաբերմունքը փողի հանդեպ և ո՞ր ուղղությամբ: Կարո՞ղ եք բերել կոնկրետ օրինակներ: Սկսե՞լ են արդյոք նրանք առավել խնայողաբար ծախսել փողը կամ Ձեզ խորհուրդներ տալ այս թեմաներով:

Առարկայի ազդեցությունը աշակերտների վրա. վարքային փոփոխություններ

- Կարո՞ղ եք հիշել կոնկրետ օրինակներ, երբ Ձեր երեխաները փորձել են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, որը կարող է լինել նույնիսկ փոքր ինչ-որ բան (ինչ-որ բան վաճառել, օգնել Ձեզ Ձեր բիզնեսում, ինչ-որ բան արտադրել և այլն): Ինչպիսի՞ հաջողություններ են նրանք ունեցել:

Արդյունավետության գնահատում

- Ընդհանուր առմամբ որքանո՞վ արդյունավետ է այս առարկայի դասավանդումը: Այն ավելի շուտ ունի դրական թե բացասական ազդեցություն Ձեր երեխաների վրա: Որքանո՞վ է այս առարկան կարևոր աշակերտների համար:
- Կնշե՞ք կոնկրետ գործոններ, որոնք համարում եք, որ կարևոր են այս առարկայի ներդրման համար:

Հետագա քայլեր

- Կո՞ղմ եք արդյոք, որ ընդլայնվի այս առարկայի դասավանդումը (առավել շատ թեմաներ ներառվեն, առավել շատ ժամեր տրվեն այս առարկային):
- Ինչ եք կարծում, ո՞ր առարկայի ուսուցիչները պետք է դասավանդեն այս առարկան: Որքանո՞վ է ներկայիս ներդրված համակարգը արդյունավետ: Ինչպիսի՞ թերություններ կան, որոնք հետագայում կարող են բարելավվել:

3.5 ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Նախատեսվում է իրականացնել խորին հարցազրույցներ առարկան դասավանդող ուսուցիչների հետ այն դպրոցներում, որոնք ներառված են հետազոտության ընտրանքում: Խորին հարցազրույցների կոնկրետ քանակ նախապես սահմանված չէ՝ կընտրվեն բոլոր այն ուսուցիչները, ովքեր իրականացնում են առարկայի դասավանդում: Խորին հարցազրույցները կանցկացվեն տվյալների հագեցվածության հասնելու սկզբունքին համապատասխան: Խորին հարցազրույցն իրականացվելու է նախապես մշակված ուղեցույցի հիման վրա:

Ձեռնարկատիրական կրթություն առարկան դասավանդող ուսուցիչների հետ խորին հարցազրույցի ուղեցույց

Ներածական հարցեր: Ո՞րն է դպրոցում դասավանդման հիմնական Ձեր առարկան: Որքա՞ն ժամանակ է, որ դասավանդում եք Ձեռնարկատիրական կրթություն առարկան: Ո՞ր դասարանների համար եք դասավանդում: Ի՞նչ եք կարծում դասավանդման Ձեր հիմնական առարկայի հետ համատեղելի է արդյոք ձեռնարկատիրական կրթություն առարկան, թե Ձեր մասնագիտացման ոլորտը հեռու է այս առարկայից:

Վերապատրաստումների վերաբերյալ հարցեր: Ինչպիսի՞ վերապատրաստումներ եք անցել այս առարկայի դասավանդման համար և ի՞նչ տևողությամբ: Արդյո՞ք վերապատրաստումները կրելու են պարբերական բնույթ: Ո՞ւմ/ո՞ր կազմակերպության կողմից են իրականացվել վերապատրաստումները: Ինչպե՞ս կգնահատեիք վերապատրաստումների արդյունավետությունը: Արդյո՞ք Ձեր գիտելիքները և հմտությունները բավարար են այս առարկայի դասավանդման համար: Արդյո՞ք ունեք լրացուցիչ վերապատրաստումների կարիք:

Ձեռնարկատիրական կրթություն առարկան: Ինչպիսի՞ն է աշակերտների վերաբերմունքը այս առարկայի նկատմամբ: Ինչպիսի՞ արձագանքներ եք ստացել նրանցից: Իսկ ծնողներից ինչպիսի՞ արձագանքներ եք ստացել: Արդյո՞ք ժամանակի ընթացքում փոխվել է ծնողների և աշակերտների վերաբերմունքը առարկայի նկատմամբ: Որո՞նք են այս առարկայի դասավանդման դրական կողմերը: Իսկ բացասական կողմերը որո՞նք են:

Ինչպե՞ս կգնահատեիք դասընթացի նեդրման արդյունավետությունը ըստ հետևյալ գործոնների

- կազմակերպչական,
- բովանդակային-մասնագիտական (նոր գիտելիքների և մասնագիտական նյութերի ուսուցանում),
- մանկավարժական (նոր մեթոդների և դրանց արդյունավետ կիրառություն),
- Նոր տեխնոլոգիաների կիրառություն

Ինչպե՞ս է ընթանում դասընթացը: Որքանո՞վ են աշակերտները ներգրավված դասընթացում: Որո՞նք են աշակերտների ամենասիրելի թեմաները: Ո՞ր թեմաներն են նրանք առավել արագ յուրացնում: Ո՞ր թեմաներն են դժվար յուրացնում:

Որքանո՞վ է ճիշտ, որ այս առարկան ներդրված է տեխնոլոգիա առարկայի մեջ: Հնարավոր համարո՞ւմ եք այս առարկայի ներդրումը այլ առարկաների շրջանակներում:

Որքանո՞վ է դասընթացի համար հատկացված ժամանակը արդյունավետ: Արդյո՞ք լրացուցիչ ժամերի կարիք կա նյութն ամբողջությամբ յուրացնելու համար:

Դասընթացի անցկացման մեթոդներ: Դասավանդման ո՞ր մեթոդներն են առավել լավ աշխատում այս դասընթացի արդյունավետ անցկացման համար՝ խաղարկային, հստակ վարժություններ, ինտերակտիվ թե այլ: Ի՞նչ դժվարությունների են հանդիպում (կամ կարող եք հանդիպել) Դուք այս առարկայի դասավանդման ժամանակ:

Առարկայի կարևորություն և ազդեցություն: Որքանո՞վ է այս առարկան կարևոր աշակերտների համար: Կնշե՞ք կոնկրետ գործոններ, որոնք համարում եք, որ կարևոր են այս առարկայի ներդրման համար: Իսկ որքանո՞վ է դասընթացի ներդրումն ազդել դպրոցի կրթության ընդհանուր որակի վրա: Ինչպե՞ս է դա դրսևորվում, կբերե՞ք օրինակներ: Ո՞ր գիտելիքները և հմտություններն եք համարում առավել կարևոր, որոնք աշակերտները ձեռք են բերում այս դասընթացի արդյունքում:

Հետագա բարելավումներ: Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս է հնարավոր բարելավել այս դասընթացի արդյունավետությունը: Ինչպե՞ս կարող է բարելավվել այս առարկայի դասավանդումը ըստ հետևյալ գործոնների

- կազմակերպչական,
- բովանդակային-մասնագիտական (նոր գիտելիքների և մասնագիտական նյութերի ուսուցանում),
- մանկավարժական (նոր մեթոդների և դրանց արդյունավետ կիրառության հմտությունների ուսուցանում),
- Նոր տեխնոլոգիաների կիրառության համատեքստում

Սոցիալական ձեռնարկատիրություն: Ծանո՞թ եք արդյոք սոցիալական ձեռնարկատիրության գաղափարին: Որտեղի՞ց եք տեղեկացել սոցիալական ձեռնարկատիրության մասին: Ի՞նչ եք կարծում, որքանո՞վ է «ձեռնարակատիրական կրթություն» առարկայի դասավանդումն իր մեջ ներառում սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ որոշակի գիտելիքների, հմտությունների փոխանցում աշակերտներին: Արդյո՞ք անհրաժեշտություն տեսնում եք, որ այս թեմային առավել խորքային անդրադարձ կատարվի ուսումնական գործընթացքում: Ինչպե՞ս եք պատկերացնում սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ դասընթացի ներդրումը դպրոցներում: Ո՞ր առարկայի շրջանակներում դա կարող է իրականացվել և ո՞ր ուսուցիչների կողմից կարող է այս առարկան դասավանդվել: Որքանով են Ձեր կողմից իրականացվող գործնական դասընթացները համապատասխանում սոցիալական ձեռնարկատիրության սկզբունքների և գաղափարներին:

3.6 ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ» ՀԿ-Ի ՄԱՐԶԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Նախատեսվում է իրականացնել նաև խորին հարցազրույցներ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ մարզային ներկայացուցչությունների հետ ք. Երևանի, Ծիրակի և Գեղարքունիքի մարզերի համար: Տվյալ դեպքում մարզային ներկայացուցչությունները հանդես են գալիս որպես առանցքային տեղեկատուներ, որոնք կարող են կարևոր տեղեկատվություն տրամադրել դասընթացը ներդրման մանրամասների և ընթացքի վերաբերյալ: Խորին հարցազրույցների կոնկրետ քանակ նախապես սահմանված չէ: Խորին հարցազրույցները կանցկացվեն տվյալների հագեցվածության հասնելու սկզբունքին համապատասխան: Խորին հարցազրույցն իրականացվելու է նախապես մշակված ուղեցույցի հիման վրա:

«Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ մարզային ներկայացուցչությունների հետ խորին հարցազրույցի ուղեցույց

Ներածական հարցեր: Ինչպիսի՞ պաշտոն եք զբաղեցնում և ինչպիսի՞ պարտականություններ ունեք «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ-ում: Քանի՞ տարի է, որ աշխատում եք այս ոլորտում: Ինչպիսի՞ն է եղել Ձեր դերակատարումը ձեռնարկատիրական կրթություն առարկայի ներդրման գործընթացքում: Ինչպիսի՞ն է այն այժմ:

Դասընթացի ներդրում: Ինչպե՞ս է իրականացվել դասընթացի ներդրումը ընտրված դպրոցներում: Ինչպե՞ս է որոշվել, թե որ դպրոցներում պետք է իրականացվի այս դասընթացի ներդրումը: Ինչպիսի՞ դժվարություններ են եղել դասընթացի ներդրման գործընթացում:

Վերապատրաստումների վերաբերյալ հարցեր: Ինչպիսի՞ վերապատրաստումներ են անցել ուսուցիչները այս առարկայի դասավանդման համար և ի՞նչ տևողությամբ: Արդյո՞ք վերապատրաստումները կրում են պարբերական բնույթ: Ո՞ւմ/ո՞ր կազմակերպության կողմից են իրականացվել վերապատրաստումները: Ինչպե՞ս եք որոշել, թե որ առարկայի ուսուցիչը պետք է դասավանդի այս առարկան: Ինչպե՞ս կգնահատեիք վերապատրաստումների արդյունավետությունը: Արդյո՞ք ուսուցիչների գիտելիքները և հմտությունները բավարար են այս առարկայի դասավանդման համար: Արդյո՞ք առկա է լրացուցիչ վերապատրաստումների կարիք:

Ձեռնարկատիրական կրթություն առարկան: Ինչպիսի՞ արձագանքներ եք ստացել դպրոցի տնօրեններից և ուսուցիչներից այս առարկայի ներդրման վերաբերյալ: Արդյո՞ք ժամանակի ընթացքում փոխվել է նրանց վերաբերմունքը առարկայի նկատմամբ: Որո՞նք են այս առարկայի դասավանդման դրական կողմերը: Իսկ բացասական կողմերը որո՞նք են:

Ինչպե՞ս կգնահատեիք դասընթացի նեդրման արդյունավետությունը ըստ հետևյալ գործոնների

- կազմակերպչական,
- բովանդակային-մասնագիտական (նոր գիտելիքների և մասնագիտական նյութերի ուսուցանում),
- մանկավարժական (նոր մեթոդների և դրանց արդյունավետ կիրառություն),

- Նոր տեխնոլոգիաների կիրառություն

Որքանո՞վ է դասընթացը համար հատկացված ժամանակը արդյունավետ: Արդյո՞ք լրացուցիչ ժամերի կարիք կա նյութն ամբողջությամբ յուրացնելու համար: Ի՞նչ դժվարությունների են հանդիպում (կամ կարող են հանդիպել) ուսուցիչներն այն առարկայի դասավանդման ժամանակ:

Առարկայի կարևորություն և ազդեցություն: Որքանո՞վ է այս առարկան կարևոր աշակերտների համար: Կնշե՞ք կոնկրետ գործոններ, որոնք համարում եք, որ կարևոր են այս առարկայի ներդրման համար: Իսկ որքանո՞վ է դասընթացի ներդրումն ազդել դպրոցի կրթության ընդհանուր որակի վրա: Ինչպե՞ս է դա դրսևորվում, կբերե՞ք օրինակներ: Ո՞ր գիտելիքները և հմտություններն եք համարում առավել կարևոր, որոնք աշակերտները ձեռք են բերում այս դասընթացի արդյունքում:

Հետագա բարելավումներ: Ինչ եք կարծում, ինչպե՞ս է հնարավոր բարելավել այս դասընթացի արդյունավետությունը: Ինչպե՞ս կարող է բարելավվել այս առարկայի դասավանդումը ըստ հետևյալ գործոնների

- կազմակերպչական,
- բովանդակային-մասնագիտական (նոր գիտելիքների և մասնագիտական նյութերի ուսուցանում),
- մանկավարժական (նոր մեթոդների և դրանց արդյունավետ կիրառության հմտությունների ուսուցանում),
- Նոր տեխնոլոգիաների կիրառության համատեքստում

Ի՞նչ եք կարծում հատկապես որ առարկաների ուսուցիչները պետք է իրականացնեն այս դասընթացի դասավանդումը: Որքանո՞վ է ճիշտ, որ այս առարկան ներդրված է տեխնոլոգիա առարկայի մեջ: Հնարավոր համարո՞ւմ եք այս առարկայի ներդրումը այլ առարկաների շրջանակներում:

Սոցիալական ձեռնարկատիրություն: Ծանո՞թ եք արդյոք սոցիալական ձեռնարկատիրության գաղափարին: Ինչ եք կարծում, որքանո՞վ է «ձեռնարակատիրական կրթություն» առարկայի դասավանդումն իր մեջ ներառում սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ որոշակի գիտելիքների, հմտությունների փոխանցում աշակերտներին: Արդյո՞ք անհրաժեշտություն տեսնում եք, որ այս թեմային առավել խորքային անդրադարձ կատարվի ուսումնական գործընթացքում: Ինչպե՞ս եք պատկերացնում սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ դասընթացի ներդրումը դպրոցներում: Ո՞ր առարկայի շրջանակներում դա կարող է իրականացվել և ո՞ր ուսուցիչների կողմից կարող է այս առարկան դասավանդվել:

3.7 ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀԵՏ

Խորին հարցազրույցներ իրականացվելու են նաև հետազոտության ընտրանքում ներառված դպրոցների տնօրենների հետ (եթե դպրոցի տնօրենը հետազոտության իրականացման ժամանակահատվածում հասանելի չէ, ապա դպրոցի ուսմասվարի հետ): Ընդհանուր առմամբ նախատեսվում է իրականացնել 6 խորին հարցազրույց դպրոցների տնօրենների հետ: Խորին հարցազրույցն իրականացվելու է նախապես մշակված ուղեցույցի հիման վրա:

Դպրոցի տնօրենի/ուսմասվարի հետ խորին հարցազրույցի ուղեցույց

Ներածական հարցեր: Քանի՞ տարի է, որ դպրոցի տնօրեն եք: Երբվանի՞ց է դպրոցում սկսել դասավանդվել ձեռնարկատիրական կրթություն առարկան: Ինչպե՞ս է իրականացվել դասընթացի ներդրումը: Ինչպե՞ս է որոշվել, որ հենց Ձեր դպրոցում պետք է իրականացվի այս դասընթացի ներդրումը:

Վերապատրաստումների վերաբերյալ հարցեր: Ինչպիսի՞ վերապատրաստումներ են անցել ուսուցիչները այս առարկայի դասավանդման համար և ի՞նչ տևողությամբ: Արդյո՞ք վերապատրաստումները կրում են պարբերական բնույթ: Ո՞ւմ/ո՞ր կազմակերպության կողմից են իրականացվել վերապատրաստումները: Ինչպե՞ս եք որոշել, թե որ առարկայի ուսուցիչը պետք է անցնի վերապատրաստումներ և դասավանդի այս առարկան: Ինչպե՞ս կգնահատեիք վերապատրաստումների արդյունավետությունը: Արդյո՞ք ուսուցիչների գիտելիքները և հմտությունները բավարար են այս առարկայի դասավանդման համար: Իսկ Դուք անձամբ մասնակցե՞լ եք որևէ վերապատրաստման այս թեմայով: Արդյո՞ք առկա է լրացուցիչ վերապատրաստումների կարիք:

Ձեռնարկատիրական կրթություն առարկան: Ինչպե՞ս աշակերտները ընդունեցին այս առարկայի դասավանդման մասին նորությունը: Ինչպիսի՞ արձագանքներ եք ստացել ծնողներից այս առարկայի ներդրման վերաբերյալ: Արդյոք ժամանակի ընթացքում փոխվել է նրանց վերաբերմունքը առարկայի նկատմամբ: Որո՞նք են այս առարկայի դասավանդման դրական կողմերը: Իսկ բացասական կողմերը որո՞նք են:

Ինչպե՞ս կգնահատեիք դասընթացի նեդրման արդյունավետությունը ըստ հետևյալ գործոնների

- կազմակերպչական,
- բովանդակային-մասնագիտական (նոր գիտելիքների և մասնագիտական նյութերի ուսուցանում),
- մանկավարժական (նոր մեթոդների և դրանց արդյունավետ կիրառություն),
- Նոր տեխնոլոգիաների կիրառություն

Որքանո՞վ է դասընթացը համար հատկացված ժամանակը արդյունավետ: Արդյո՞ք լրացուցիչ ժամերի կարիք կա նյութն ամբողջությամբ յուրացնելու համար: Ի՞նչ դժվարությունների են հանդիպում (կամ կարող են հանդիպել) ուսուցիչներն այն առարկայի դասավանդման ժամանակ:

Առարկայի կարևորություն և ազդեցություն: Որքանո՞վ է այս առարկան կարևոր աշակերտների համար: Կնշե՞ք կոնկրետ գործոններ, որոնք համարում եք, որ կարևոր են այս առարկայի ներդրման համար: Իսկ որքանո՞վ է դասընթացի ներդրումն ազդել դպրոցի կրթության ընդհանուր որակի վրա: Ինչպե՞ս է դա դրսևորվում, կբերե՞ք օրինակներ: Ո՞ր գիտելիքները և հմտություններն եք համարում առավել կարևոր, որոնք աշակերտները ձեռք են բերում այս դասընթացի արդյունքում:

Հետագա բարելավումներ: Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս է հնարավոր բարելավել այս դասընթացի արդյունավետությունը: Ինչպե՞ս կարող է բարելավվել այս առարկայի դասավանդումը ըստ հետևյալ գործոնների

- կազմակերպչական,
- բովանդակային-մասնագիտական (նոր գիտելիքների և մասնագիտական նյութերի ուսուցանում),
- մանկավարժական (նոր մեթոդների և դրանց արդյունավետ կիրառության հմտությունների ուսուցանում),
- Նոր տեխնոլոգիաների կիրառության համատեքստում

Ի՞նչ եք կարծում հատկապես որ առարկաների ուսուցիչները պետք է իրականացնեն այս դասընթացի դասավանդումը: Որքանո՞վ է ճիշտ, որ այս առարկան ներդրված է տեխնոլոգիա առարկայի մեջ: Հնարավոր համարո՞ւմ եք այս առարկայի ներդրումը այլ առարկաների շրջանակներում:

Սոցիալական ձեռնարկատիրություն: Ծանո՞թ եք արդյոք սոցիալական ձեռնարկատիրության գաղափարին: Ինչ եք կարծում, որքանո՞վ է «ձեռնարակատիրական կրթություն» առարկայի դասավանդումն իր մեջ ներառում սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ որոշակի գիտելիքների, հմտությունների փոխանցում աշակերտներին: Արդյո՞ք անհրաժեշտություն տեսնում եք, որ այս թեմային առավել խորքային անդրադարձ կատարվի ուսումնական գործընթացքում: Ինչպե՞ս եք պատկերացնում սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ դասընթացի ներդրումը դպրոցներում: Ո՞ր առարկայի շրջանակներում դա կարող է իրականացվել և ո՞ր ուսուցիչների կողմից կարող է այս առարկան դասավանդվել:

3.8 ԱՆԿԵՏԱՎՈՐՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ձեռնարկատիրական կրթություն առարկայի ազդեցության գնահատման համար ընտրվել է աշակերտների շրջանում **անկետավորման մեթոդը**, որը ենթադրում է, որ աշակերտներն ինքնուրույն են լրացնելու հարցաթերթը: Այս մեթոդն արդյունավետ է այնքանով, որ այս մեթոդով կարող ենք ստանալ առավել անկեղծ պատասխաններ, ինչպես նաև հարցման այս մեթոդը ծախսատար չէ: Անկետավորում կիրականացվի միայն 10-11-րդ դասարանների աշակերտների շրջանում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2-րդ և 3-րդ դասարանների աշակերտները ամենայն հավանականությամբ կդժվարանան հարցաթերթերը ինքնուրույն լրացնել: Որպեսզի հարցաթերթերի լրացումը դժվարություն չներկայացնի 10-11-րդ դասարանների աշակերտների համար այն կազմվելու է հնարավորինս պարզ և հասկանալի լեզվով: Հարցաթերթերի լրացման ընթացքը վերահսկվելու է համակարգողների կողմից, ովքեր հարցաթերթերի լրացման ընթացքում կարող են պարզաբանումներ ներկայացնել հարցեր առաջանալու դեպքում և ստուգել հարցաթերթերի լրացվածությունը:

Ձեռնարկատիրական կրթություն առարկայի դասավանդման ազդեցության գնահատման համար դուրս են բերվել այն կատեգորիաները/բաղադրիչները, որոնց շուրջ պետք է կառուցել ազդեցության գնահատումը: Ենթադրվում է, որ ձեռնարկատիրական կրթություն առարկայի ներդրումը ունեցել է ազդեցություն երեք մակարդակներում՝ **կոգնիտիվ** (գիտելիք, կարողություններ և հմտություններ), **աֆֆեկտիվ** (վերաբերմունք, դիրքորոշումներ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նկատմամբ) և **վարքային** (փոփոխություններ, որոնք նպաստել են, որ աշակերտները սեփական նախաձեռնությամբ զբաղվեն ձեռնարկատիրական գործունեությամբ): Այս բաղադրիչները հանդիսանում են «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի ազդեցության օպերացիոնալ սխեմայի մաս՝

1.Կոգնիտիվ բաղադրիչ (գիտելիք, կարողություններ և հմտություններ)
2.Աֆֆեկտիվ բաղադրիչ (վերաբերմունք, դիրքորոշումներ ձեռնարկատիրության նկատմամբ, դրական նախատրամադրվածության)
3. Վարքային բաղադրիչ (ձեռնարկատիրական գործունեության ծավալում սեփական նախաձեռնությամբ)

Ձեռնարկատիրական կրթություն առարկայի ազդեցության գնահատման համար կկիրառվի ազդեցության խմբի և ստուգիչ խմբի համեմատության մեթոդը: Կձևավորվի ստուգիչ խումբ, որում ներառված կլինեն համանման դպրոցների նույն դասարանների աշակերտներ, ովքեր սակայն չեն անցել ձեռնարկատիրական կրթություն դասընթացը:

Անկետավորման ընտանքը համատարած է՝ ներառելով ընտրված դպրոցներում ձեռնարկատիրական կրթություն դասընթացում ներգրավված 10-11-րդ դասարանների բոլոր աշակերտներին: Ազդեցության խմբում և ստուգիչ խմբում կներառվեն հավասար թվով աշակերտներ՝ պահպանելով սեռային նույն բաշխվածությունը երկու խմբերում էլ:

Անկետավորման համար կկիրառվի կիսաձևայնացված հարցաթերթ, որտեղ ներառված կլինեն բաց, փակ և կիսաբաց հարցեր (Հավելված 1. Մաս 1): Ստուգիչ խմբի համար կազմված հարցաթերթը որոշ առումներով տարբերվում է ազդեցության խմբի հարցաթերթից, սակայն հիմնական հարցերը և ոլորտները մնում են նույնը (Հավելված 1. Մաս 2):

3.9 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության երկրորդ՝ «Սոցիալական ձեռնարկատիրության ներդրման հնարավորությունը» բաղադրիչ շրջանակներում նախատեսվում է իրականացնել փաստաթղթերի վերլուծություն, որտեղ փաստաթղթերի դերում հանդես են գալու «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի համար նախատեսված դասագրքերը, այլ առարկաների դասագրքերում ինտեգրված հատվածները և դասընթացի վերաբերյալ մեթոդական ձեռնարկները**:** Վերլուծության հիմնական նպատակն է բացահայտել, թե որքանով են առկա փաստաթղթերն անդրադառնում սոցիալական ձեռնարկատիրությանը, իսկ ուղղակի անդրադարձ չլինելու դեպքում պարզել, թե որքանով են դասավանդվող թեմաներն արտացոլում սոցիալական ձեռնարկատիրության հղանցքի բաղադրիչներ և սկզբունքային տարրեր:

Ընդհանուր առմամբ վերլուծության արդյունքում ակնկալվում է ստանալ հետևյալ հարցերի պատասխանները՝

- Արդյոք ուսումնասիրության ենթակա փաստաթղթերում անդրադարձ է կատարվում սոցիալական ձեռնարկատիրությանը որպես առանձին հասկացության/կոնցեպտի:
- Արդյոք «սոցիալական ձեռնարկատիրություն» թեման ներառված է «ձեռնարկատիրական կրթություն» դասընթացում, եթե այո, ապա որքան ժամաքանակով:
- Որքանով են սոցիալական ձեռնարկատիրության սկզբունքային տարրերը և գաղափարները ներդրված դասընթացում:

Կկիրառվի փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդը: Բովանդակային վերլուծությունն իրականացվում է չափման տեխնիկաների կիրառությամբ, որտեղ որպես չափման օբյեկտներ են հանդես գալիս վերլուծական միավորները: Այս նպատակով կձևավորվեն վերլուծական կատեգորիաները և հաշվարկման միավորների ցանկը: Վերլուծական կատեգորիաներն առավել ընդհանրական ոլորտներն են, որոնք կապված են «սոցիալական ձեռնարկատիրության» հասկացության հետ՝ այն հակադրելով «շահույթ հետապնդելու նպատակով իրականացվող ձեռնարկատիրությանը»: Վերլուծական միավորները առավել կոնկրետ բառերը, բառակապակցությունները կամ պարբերություններն են, որոնք ենթակա են չափման: Չափման համար կկիրառվի կոդավորման համակարգ, որը կարտացոլի բովանդակության հետևյալ չորս հիմնական բնութագրիչները՝ հաճախականություն, ուղղվածություն, ինտենսիվություն և տարածություն՝

Հաճախականությունը ցույց է տալիս, թե մեզ հետաքրքրող հատկանիշը/վերլուծական միավորը ինչ հաճախականությամբ է հանդիպում տեքստում:
Ուղղվածությունը մատնանշում է, թե վերլուծական միավորի մատնանշման դեպքում որ ուղղվածության է հաղորդագրությունը՝ դրական թե բացասական, կողմ թե դեմ:
Ինտենսիվությունը վերաբերում է որոշակի ուղղվածություն ունեցող հաղորդագրության ուժին: Այսինքն՝ ուժեղ թե թույլ է արտահայտված որևէ հատկանիշ:
Տարածությունը ցույց է տալիս, թե տվյալ ուսումնասիրման ենթակա հասկացությունը/կատեգորիան պարունակող տեքստը որքան ծավալ է զբաղեցնում, որը կարող է իրականացվել բառերի, նախադասությունների կամ տեսքտի զբաղեցրած մակերեսի չափումով:

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԵՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հետազոտության իրականացման ընթացակարգը հետևյալն է՝

- Սույն մեթոդաբանության նախնական հաստատումից հետո կիրականացվի դաշտային հետազոտողների նախնական հրահանգավորում գործիքների ապրոբացիայի համար:
- Ապրոբացիայի համար նախատեսված դպրոցում կփորձարկվեն գործիքները:
- Կազմակերպվի մեթոդաբանության մշակողների և դաշտային հետազոտողների հետապրոբացիոն հանդիպում գործիքների շտկմանն ուղղված ինֆորմացիայի փոխանակման համար:
- Դաշտային աշխատանքները համակարգողի կողմից կկազմվեն հետազոտական խմբերն ու ժամանակացույցը
- Կազմակերպվի դաշտային հետազոտողների վերջնական հրահանգավորում շտկված գործիքներին, ժամանացույցին և դաշտային աշխատանքների իրականացման այլ մանրամասներին ծանոթացնելու նպատակով:
- Կպատրաստվեն կրթական ծրագրերի քարտեզագրման համար անհրաժեշտ պաշտոնական նամակները
- Ընտրված դպրոցներում նախապես պայմանավորվածություն ձեռք կբերվեն դպրոցի տնօրենների հետ. Վերջիններս կտեղեկացվեն այցի համար անհրաժեշտ բոլոր հանգամանքների մասին, որպեսզի այցի ժամանակ ամեն ինչ կազմակերպված լինի (ՖԽ-ներ, աշակերտներ և այլն):
- Կկատարվեն այցերի համար անհրաժեշտ գնումները, կնախապատրաստվեն անհրաժեշտ ցուցակները և լրացման ենթակա հարցաթերթերը
- Դաշտային աշխատանքների առաջին այցից հետո՝ այլ այցերին զուգահեռ կմեկնարկեն որակական հարցազրույցների սղագրությունների իրականացումը:
- Բոլոր սղագրությունները, քարտերի ու անկետաների համակարգչային բազաները կտրամադրվեն վերլուծաբանին
- Կիրականացվի դաշտային նյութի վերլուծությունը և կպատրաստվի հետազոտական աշխատանքների ամփոփիչ հաշվետվությունը:

Հետազոտության իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել հետևյալ մասնագետներին՝

Դաշտային հետազոտողներ

- Ֆոկուս խմբի մոդերատոր – աշակերտների ծնողների հետ 6 ֆոկուս խմբեր նախապատրաստելու և վարելու համար
- Խորին հարցազրույցի վարող – ՁԿ առարկան դասավանդողների, դպրոցի տնօրենի և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ՀԿ մարզային ներկայացուցիչների հետ խորին հարցազրույցներ վարելու համար
- Դասալսող – ՁԿ առարկայի դասընթացների դասալսում իրականացնելու համար
- Անկետավորող – աշակերտների շրջանում ՁԿ դասընթացի վերաբերյալ անկետավորում անցկացնելու համար

Սղագրողներ

- Սղագրման են ենթակա ֆոկուս խմբերի, խորին հարցազրույցների, դեպքերի ուսումնասիրության շրջանակներում թեմատիկ հարցազրույցների ձայնագրությունները

Կոդավորողներ

- Կոդավորման են ենթակա անկետավորման և դասալսման քարտերի բաց հարցերը

Մուտքագրողներ

- Տվյալների կառուցվածքայնացված բազայում մուտքագրման են ենթակա անկետավորման լրացված հարցաթերթիկները և դասալսումների լրացված քարտերը

Վերլուծաբան

- Իրականացնում է դաշտային աշխատանքների արդյունքում հավաքագրված տվյալների վերլուծություն և կազմում է արդյունքների վերլուծության հաշվետվություն

Դաշտային աշխատանքների համակարգող

- Գործիքների ապրոբացիայի կազմակերպում,
- Ընտրված դպրոցների տնօրենների հետ համաձայնությունների ձեռք բերում և բոլոր անհրաժեշտ անձանց ներկայության ապահովում
- Դաշտային աշխատաքների երթուղու և ժամանակացույցի մշակում, անհրաժեշտության դեպքում վերափոխում
- Դաշտային խմբի նախապատրաստում հետազոտական աշխատանքներին. հարցաշարերի, ձայնագրիչների, կոնտակտային անձանց ցուցակների և այլ անհրաժեշտ պարագաների տրամադրում, դպրոցներում ծագած առանձնահատկությունների մասին հրահանգավորում և այլն,
- Հետդաշտային աշխատանքների կազմակերպում. պայմանավորվածությունների ձեռք բերում մուտքագրողների, կոդավորողների և մնացած աշխատողների հետ,
- Հետդաշտային աշխատանքների ժամանակացույցի մշակում և ընթացակարգի վերահսկում, ընդհուպ մինչև վերլուծության ավարտը և դրա հանձնումը պատվիրատուին,

5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հետազոտությունը կիրականացվի ըստ ստորև բերված ժամանակացույցի՝

Հետազոտության փուլեր	**Հոկտեմբեր 2018**																													**Նոյեմբեր 2018**									
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3	4	5	6	7	8	9	10
Մեթոդաբանանության վերջնականացում																																								
Հարցազրուցավարների ինստրուկտաժ																																								
մեթոդաբանության փորձարկում																																								
Դաշտային աշխատանքներ																																								
Ծրագրերի քարտեզագրում																																								
Հաջողված դեպքերի ուսումնասիրություն																																								
ՁԿ առարկայի դասալսումներ																																								
Ֆոկուս խմբերի անցկացում																																								
Խորին հարցումների անցկացում																																								
Փաստաթղթերի վերլուծություն																																								
Տվյալների որակի ստուգում և մշակում																																								
Տվյալների վերլուծություն																																								
Վերջնական հաշվետվության պատրաստում																																								

ՀԱՎԵԼՎԱԾ 1: «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ԱՆՑՆՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆԿԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Մաս 1

Հարցաթերթ N ___

Քաղաք	1. Երևան 2.Գյումրի 3.Սևան
Դպրոց N	
Դասարան	1. 10-րդ դասարան 2. 11-րդ դասարան
Խումբ	(1.) Ազդեցության խումբ 2. Ստուգիչ խումբ

Հարգելի՛ աշակերտ,

Մենք իրականացնում ենք հետազոտություն «Ձեռնարկատիրական կրթություն» առարկայի գնահատման համար և խնդրում ենք Ձեզ տրամադրել ժամանակ և լրացնել այս հարցաշարը: Հարցումն անանուն է և Ձեր կողմից տրված պատասխանները ներկայացվելու են միայն ընդհանրացված ձևով: Ձեր կողմից լրացված հարցաշարի արդյունքները ոչ մի կերպ չեն ազդելու Ձեր գնահատականների վրա: Շնորհակալ ենք տրամադրված ժամանակի և անկեղծ պատասխանների համար:

Q1. Որքա՞ն ժամանակ է, որ անցնում եք Ձեռնարկատիրական կրթություն առարկան:

1. Մինչև 6 ամիս
2. 6 ամսից ավել սակայն ոչ ավել քան մեկ տարի
3. Մեկ տարուց ավել

Q2. Ներքևի աղյուսակում ներկայացված են մի քանի դատողություններ: Ընթերցեք դատողությունները և 1-ից 5 բալանոց սանդակով գնահատեք, թե որքանով եք համաձայն այդ դատողությունների հետ, որտեղ 1-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեք» տվյալ մտքի հետ, 5-ը՝ «լիովին համաձայն եք»:

N	Դատողություններ	Գնահատական				
1.	«Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացը հետաքրքիր է	1	2	3	4	5
2.	Դասընթացը ինձ տալիս է օգտակար գիտելիքներ և հմտություններ	1	2	3	4	5
3.	Կարծում եմ դասընթացի ընթացքում ձեռք բերված գիտելիքները ես կկիրառեմ ապագայում	1	2	3	4	5
4.	Ես դրական եմ վերաբերվում ձեռնարկատիրական գործունեությանը	1	2	3	4	5
5.	Ապագայում ես ցանկանում եմ դառնալ ձեռներեց	1	2	3	4	5
6.	Այժմ ես ունեմ որոշակի բիզնես գաղափարներ, որոնք ապագայում հնարավոր է իրականացնեմ	1	2	3	4	5
7.	Ձեռներեցությամբ զբաղվելով հնարավոր է «լավ ապրել»	1	2	3	4	5
8.	Ձեռներեցը պետք է ունենա բնավորության բացասական գծեր հաջողության հասնելու համար (օրինակ խորամանկություն, խաբելու ունակություն և այլն)	1	2	3	4	5
9.	Հաջողակ ձեռներեց հնարավոր է դառնալ միայն ոչ ազնիվ ճանապարհներով	1	2	3	4	5

Q3. «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացի շրջանակներում դասավանդման նշված մեթոդներից որո՞նք են արդյունավետ ըստ Ձեզ: Գնահատեք 1-ից 5 բալանոց սանդղակով որտեղ 1-ը նշանակում է «ընդհանրապես արդյունավետ չեն», 5-ը՝ «լիովին արդյունավետ են»: Եթե տվյալ մեթոդը չի կիրառվում Ձեր դասընթացների ընթացքում՝ նշում կատարեք «չի կիրառում» դաշտի դիմաց:

N	Մեթոդներ	Չի կիրառվում	Գնահատական				
1.	Power Point ներկայացում		1	2	3	4	5
2.	Բանավեճ-քննարկում		1	2	3	4	5
3.	Աշխուժացնող խաղեր, վարժություններ		1	2	3	4	5
4.	Խմբային քննարկումներ (աշակերտների միջև)		1	2	3	4	5
5.	Խմբային գործնական աշխատանքների իրականացում		1	2	3	4	5
6.	Արտադասագրքային նյութերի տրամադրում		1	2	3	4	5
7.	Այլ մեթոդներ (խնդրում ենք նշել) _____ _____		1	2	3	4	5
8.	Այլ մեթոդներ (խնդրում ենք նշել) _____ _____		1	2	3	4	5

Q4. Ներքևում նշված են թեմաներ, որոնք Դուք ամենայն հավանականությամբ անցել եք «Ձեռնարկատիրական կրթություն» առարկայի շրջանակներում: Խնդրում ենք 1-ից 5 բալանոց սանդղակով գնահատել, թե որքանով եք լավ տիրապետում նշված թեմաներին, որտեղ 1-ը նշանակում է Ձեր գիտելիքները և կարողությունները տվյալ թեմայի դեպքում ընդհանրապես բավարար չեն, 5-ը լիովին բավարար են: Խնդրում ենք լինել անկեղծ: Ձեր կողմից նշված պատասխանները չեն ազդի Ձեր գնահատականների վրա: Եթե չեք անցել դեռևս այդ թեմաները՝ նշում կատարեք «չեմ անցել» դաշտում:

N	Թեմաներ	Չեմ անցել	Գնահատական				
1.	Շուկայի հետազոտություն		1	2	3	4	5
2.	Բիզնես պլանի կազմում		1	2	3	4	5
3.	SWOT վերլուծություն		1	2	3	4	5
4.	Արժեթղթերի թողարկում և վաճառք		1	2	3	4	5
5.	Բիզնես էթիկա, աշխատանքային էթիկա		1	2	3	4	5
6.	Արտադրության կազմակերպում		1	2	3	4	5
7.	Վաճառքի կազմակերպում, գովազդ		1	2	3	4	5
8.	Փաստաթղթավարություն		1	2	3	4	5
10.	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն		1	2	3	4	5

Q5. Վերջին մեկ տարվա ընթացքում արդյո՞ք իրականացրել եք որևէ բիզնես ծրագիր դպրոցական ծրագրի շրջանակներում (խմբային կամ անհատական):

1. Այո 2. Ոչ

Q6. Եթե այո, կներկայացնեք, թե ինչպիսի՞ ծրագիր եք իրականացրել և ինչպիսի՞ հաջողություններ եք ունեցել

_____
_____
_____
_____
_____

Q7. Վերջին մեկ տարվա ընթացքում ունեցել եք որևէ բիզնես մտահաղացում, իրականացրել եք որևէ բիզնես ծրագիր կամ գործողություն Ձեր սեփական նախաձեռնությամբ (կարող է լինել նույնիսկ փոքր ծրագիր՝ վաճառել ինչ-որ իր, ստեղծել կայք կամ յութուբյան էջ, բիզնես գաղափարով կիսվել ընկերների հետ և այլն):

1. Այո, ունեմ բիզնես գաղափար/գաղափարներ
2. Այո, բիզնես գաղափարով կիսվել եմ ընկերներիս հետ, պլանավորում ենք սկսել
3. Այո, իրականացրել եմ կոնկրետ քայլեր ուղղված բիզնես գաղափարի իրականացմանը
4. Այո, ներկայումս բիզնեսը աշխատում է
5. Ոչ, չեմ ունեցել

Q8. Եթե իրականացրել եք որևէ ծրագիր, կներկայացնեք, թե ինչպիսի՞ ծրագիր եք իրականացրել և ինչպիսի՞ հաջողություններ եք ունեցել

_____
_____
_____
_____
_____

Q9. Արդյո՞ք բիզնեսի իրականացման արդյունքում ստացել եք որոշակի եկամուտ

1. Այո, ստացել եմ
2. Ոչ, չեմ ստացել

Q10. Կկիսվեք մեզ հետ, թե ինչպես եք ծախսել այդ եկամուտը

_____
_____
_____

Q11. Լսե՞լ եք արդյոք «սոցիալական ձեռնարկատիրության» մասին: Որքանո՞վ եք ծանոթ սոցիալական ձեռնարկատիրությանը:

1.Ոչ, ընդհանրապես ծանոթ չեմ այս հասկացության հետ
2.Լսել եմ, սակայն չեմ կարող ասել թե ինչ է այն
3.Լսել եմ և մակերեսային ծանոթ եմ բովանդակությանը
4. Տեղյակ եմ և գիտեմ թե ինչ է սոցիալական ձեռնարկատիրությունը

Q12. Եթե ծանոթ եք «սոցիալական ձեռնարկատիրությանը», կասեք, թե որտեղից թե տեղեկացել սոցիալական ձեռնարկատիրության մասին:

1.Անցել ենք դասերի ընթացքում
2.Կարդացել եմ այդ մասին համացանցում
3.Դպրոցից դուրս մասնակցել եմ այս մասին կազմակերպված դասընթացների/սեմինարների
4.Լսել եմ հեռուստատեսությամբ
5. Այլ (խնդրում ենք նշել) _____

Ընդհանուր տվյալներ

D1. Ո՞րերորդ դասարանում եք Դուք սովորում՝ __ -րդ դասարան:

D2. Ձեր սեռը՝ 1. Արական 2. իգական

D3. Ընդհանուր առմամբ ինչպիսին է դպրոցում Ձեր առաջադիմությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10

Մաս 2

Հարցաշար N __

Քաղաք	1. Երևան 2.Գյումրի 3.Սևան
Դպրոց N	
Դասարան	1. 10-րդ դասարան 2. 11-րդ դասարան
Խումբ	1. Ազդեցության խումբ (2.) Ստուգիչ խումբ

Հարգելի՛ աշակերտ,

Մենք իրականացնում ենք հետազոտություն ձեռնարկատիրություն կրթություն թեմայով և խնդրում ենք Ձեզ տրամադրել ժամանակ և լրացնել այս հարցաշարը: Հարցումն անանուն է և Ձեր կողմից տրված պատասխանները ներկայացվելու են միայն ընդհանրացված ձևով: Ձեր կողմից լրացված հարցաշարի արդյունքները ոչ մի կերպ չեն ազդի Ձեր գնահատականների վրա: Շնորհակալ ենք տրամադրված ժամանակի և անկեղծ պատասխանների համար:

Q1. Ներքևի աղյուսակում ներկայացված են մի քանի դատողություններ: Ընթերցեք դատողությունները և 1-ից 5 բալանոց սանդակով գնահատեք, թե որքանով եք համաձայն այդ դատողությունների հետ, որտեղ 1-ը նշանակում է «ընդհանրապես համաձայն չեք» տվյալ մտքի հետ, 5-ը՝ «լիովին համաձայն եք»:

N	Դատողություններ	Գնահատական				
1.	Ես դրական եմ վերաբերվում ձեռնարկատիրական գործունեությանը	1	2	3	4	5
2.	Ապագայում ես ցանկանում եմ դառնալ ձեռներեց	1	2	3	4	5
3.	Այժմ ես ունեմ որոշակի բիզնես գաղափարներ, որոնք ապագայում հնարավոր է իրականացնեմ	1	2	3	4	5
4.	Ձեռներեցությամբ զբաղվելով հնարավոր է «լավ ապրել»	1	2	3	4	5
5.	Ձեռներեցը պետք է ունենա բնավորության բացասական գծեր հաջողության հասնելու համար (օրինակ խորամանկություն, խաբելու ունակություն և այլն)	1	2	3	4	5
6.	Հաջողակ ձեռներեց հնարավոր է դառնալ միայն ոչ ազնիվ ճանապարհներով	1	2	3	4	5

Q2. Տարբեր դասընթացների շրջանակներում դասավանդման նշված մեթոդներից որոնք են արդյունավետ ըստ Ձեզ: Գնահատեք 1-ից 5 բալանոց սանդղակով որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես արդյունավետ չեն, 5-ը՝ լիովին արդյունավետ են: Եթե տվյալ մեթոդը չի կիրառվում Ձեր դասընթացների ընթացքում՝ նշում կատարեք «չի կիրառում» դաշտի դիմաց:

N	Մեթոդներ	Չի կիրառվում	Գնահատական				
1.	Power Point նրկայացում		1	2	3	4	5
2.	Բանավեճ-քննարկում		1	2	3	4	5
3.	Աշխուժացնող խաղեր, վարժություններ		1	2	3	4	5

4.	Խմբային քննարկումներ (աշակերտների միջև)		1	2	3	4	5
5.	Խմբային գործնական աշխատանքների իրականացում		1	2	3	4	5
6.	Արտադասագրքային նյութերի տրամադրում		1	2	3	4	5
7.	Այլ մեթոդներ (խնդրում ենք նշել) _____ _____		1	2	3	4	5
8.	Այլ մեթոդներ (խնդրում ենք նշել) _____ _____		1	2	3	4	5

Q3. Ներքևում նշված են թեմաներ: Խնդրում ենք 1-ից 5 բալանոց սանդղակով գնահատել, թե որքանով լավ եք տիրապետում նշված թեմաներին, որտեղ 1-ը նշանակում է Ձեր գիտելիքները և կարողությունները այդ թեմայի դեպքում ընդհանրապես բավարար չեն, 5-ը՝ լիովին բավարար են: Խնդրում ենք լինել անկեղծ: Ձեր կողմից նշված պատասխանները չեն ազդի Ձեր գնահատականների վրա:

N	Թեմաներ	Գնահատական				
1.	Շուկայի հետազոտություն	1	2	3	4	5
2.	Բիզնես պլանի կազմում	1	2	3	4	5
3.	SWOT վերլուծություն	1	2	3	4	5
4.	Արժեթղթերի թողարկում և վաճառք	1	2	3	4	5
5.	Բիզնես էթիկա, աշխատանքային էթիկա	1	2	3	4	5
6.	Արտադրության կազմակերպում	1	2	3	4	5
7.	Վաճառքի կազմակերպում, գովազդ	1	2	3	4	5
8.	Փաստաթղթավարություն	1	2	3	4	5
10.	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն	1	2	3	4	5

Q4. Վերջին մեկ տարվա ընթացքում արդյո՞ք իրականացրել եք որևէ բիզնես ծրագիր դպրոցական ծրագրի շրջանակներում (խմբային կամ անհատական):

1. Այո 2. Ոչ

Q5. Եթե այո, կներկայացնեք, թե ինչպիսի՞ ծրագիր եք իրականացրել և ինչպիսի՞ հաջողություններ եք ունեցել

_____
_____
_____
_____
_____

Q6. Վերջին մեկ տարվա ընթացքում ունեցել եք որևէ բիզնես մտահաղացում, իրականացրել եք որևէ բիզնես ծրագիր կամ գործողություն Ձեր սեփական նախաձեռնությամբ (կարող է լինել նույնիսկ փոքր ծրագիր՝ վաճառել ինչ-որ իր, ստեղծել կայք կամ յութուբյան էջ, բիզնես գաղափարով կիսվել ընկերների հետ և այլն):

1. Այո, ունեմ բիզնես գաղափար/գաղափարներ
2. Այո, բիզնես գաղափարով կիսվել եմ ընկերներիս հետ, պլանավորում ենք սկսել
3. Այո, իրականացրել եմ կոնկրետ քայլեր ուղղված բիզնես գաղափարի իրականացմանը
4. Այո, ներկայումս բիզնեսը աշխատում է
5. Ոչ, չեմ ունեցել

Q7. Եթե իրականացրել եք որևէ ծրագիր, կներկայացնեք, թե ինչպիսի՞ ծրագիր եք իրականացրել և ինչպիսի՞ հաջողություններ եք ունեցել

_____
_____
_____
_____
_____

Q8. Արդյո՞ք բիզնեսի իրականացման արդյունքում ստացել եք որոշակի եկամուտ

1. Այո, ստացել եմ
2. Ոչ, չեմ ստացել

Q9. Կկիսվեք մեզ հետ, թե ինչպես եք ծախսել այդ եկամուտը

_____
_____
_____

Q10. Լսե՞լ եք արդյոք «սոցիալական ձեռնարկատիրության» մասին: Որքանո՞վ եք ծանոթ սոցիալական ձեռնարկատիրությանը:

1.Ոչ, ընդհանրապես ծանոթ չեմ այս հասկացության հետ
2.Լսել եմ, սակայն չեմ կարող ասել թե ինչ է այն
3.Լսել եմ և մակերեսային ծանոթ եմ բովանդակությանը
4. Տեղյակ եմ և գիտեմ թե ինչ է սոցիալական ձեռնարկատիրությունը

Q11. Եթե ծանոթ եք «սոցիալական ձեռնարկատիրությանը», կասեք, թե որտեղից թե տեղեկացել սոցիալական ձեռնարկատիրության մասին:

1.Անցել ենք դասերի ընթացքում
2.Կարդացել եմ այդ մասին համացանցում
3.Դպրոցից դուրս մասնակցել եմ այս մասին կազմակերպված դասընթացների/սեմինարների
4.Լսել եմ հեռուստատեսությամբ
5. Այլ (խնդրում ենք նշել) _____

Ընդհանուր տվյալներ

D1. Որերոդ դասարանում եք Դուք սովորում՝ __ -րդ դասարան:

D2. Ձեր սեռը՝ 1. Արական 2. Իգական

D3. Ընդհանուր առմամբ ինչպիսին է դպրոցում Ձեր առաջադիմությունը

1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**